


ՀՀ դատական իշխանության գործառույթային լիազորությունները


Մաֆարյան Գառնիկ Հ.

իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, գլխավոր գիտաշխատող
ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ (Երևան, ՀՀ)

 <https://orcid.org/0009-0001-2991-8566>
marineeghiazaryan@mail.ru

Ալոյան Լևոն Գ.

ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ,
ՀՀ քննչական կոմիտեում քննիչ (Երևան, ՀՀ)

 <https://orcid.org/0009-0002-1222-4418>
levon_aloyan97@mail.ru

ՀՏԳ՝ 342.56(479.25); EDN: KMPSIQ

DOI: 10.58587/18292437-2025.2-61

Հանգուցաբառեր և բառակապակցություններ՝ արդարադատություն, դատական իշխանություն, արդյունավետության բարձրացում, դատաիրավական բարեփոխումներ, հասարակական կարծիք, համակարգված մոտեցում

Функциональные органы судебной власти РА

Сафарян Гарник Г.

доктор юридических наук, профессор, главный научный сотрудник,
Институт философии, социологии и права НАН РА (Ереван, РА)

Алоян Левон Г.

Соискатель, Институт философии, социологии и права НАН РА,
В должности следователя Следственного комитета Республики Армения (Ереван, РА)

Аннотация. В данной статье подробно обсуждается современное состояние судебной системы Республики Армения и вопросы, связанные с ее совершенствованием и развитием.

В статье отмечается, что предыдущие «реформы», связанные с судебной системой, не дали ожидаемых результатов, поскольку проводились по частям, не были последовательными и обоснованными. В статье рекомендуется проводить судебную реформу системно и комплексно с учетом современного мнения общества относительно этого института.

Ключевые слова и словосочетания: правосудие, судебная система, повышение эффективности, судебная реформа, общественное мнение, системный подход

Functional Authorities of RA Judicial Authority

Safaryan Garnik H.

Doctor of Law, Professor, Chief Researcher of the Institute of Philosophy, Sociology and Law,
National Academy of Sciences of the Republic of Armenia (Yerevan, RA)

Aloyan Levon G.

The applicant of the Institute of Philosophy, Sociology and Law of the NAS RA,
Committee of the Republic of Armenia (Yerevan, RA)

Abstract. The present article discusses in detail the current state of the judicial system of the Republic of Armenia and issues related to its improvement and development. It notes that previous "reforms" related to the judicial system did not produce the expected results, as they were implemented piecemeal and lacked consistency and justification. The article recommends undertaking judicial reform systematically and comprehensively, considering the contemporary societal opinion regarding this institution.

Keywords & phrases: justice, judicial system, increasing efficiency, judicial reform, public opinion, systematic approach

Ներածություն

Անցած տարիների ժամանակահատվածում Հանրապետությունում զգալի աշխատանք է կատարվել անկախ և ինքնավար դատական

իշխանության ձևավորման և կայացման համար: Այդ նպատակով ՀՀ կառավարության կողմից ընդունվել է առնվազն երեք դատաիրավական բարեփոխումների ռազմավարություն, վերջինը

ընդունվել է 2022 թվականին՝ «Իրավական և դատական բարեփոխումների 2022-2026 թթ. ռազմավարություն», որի հիմնական նպատակն է անկախ ու արդարադատության իշխանության մարմինների ստեղծումը, ինչպես նաև սահմանադրական փոփոխությունների կամ նոր սահմանադրության նախագծի ընդունումը:

Այս ամենը իրենց հերթին ենթադրում են վերստին իմաստավորեն և վերանայեն դատական իշխանության գործառնության լիազորությունները, դրանց բովանդակային առանձնահատկությունները և արդարադատության արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացումը:

Հիմնական բովանդակություն

Դատական իշխանությունն իրեն բնորոշ հատուկ ընթացակարգով կոչված է լուծել իրավական վեճերը մարդկանց, մարդու և պետության իրավաբանական անձանց և պետության միջև: Ինչպես նշում է Բ. Ա. Ստրաշունը. Դատական իշխանությունը մի գործիք է, որի միջոցով իրավունքն ազդում է հասարակական հարաբերությունների վրա [16]:

Ժամանակակից դատական իշխանության գործառնության լիազորությունները բազմազան են: ՀՀ դատական իշխանության գործառնության լիազորությունները նույնպես բազմաթիվ են, մասնավորապես՝ արդարադատության իրականացումը, նորմաստեղծ գործունեությունը, վերահսկողություն մինչդատական վարույթի նկատմամբ, վարչաիրավական ակտերի օրինականության ստուգումը: Արդարադատությունը ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված պետական գործունեության հատուկ տեսակ է, որն իրականացնում է միայն դատարանը՝ դատական համապարտադիր որոշումների ընդունման միջոցով, որի պարտադիր պայմաններն են. օրինականությունը, արդարացիությունը, հիմնավորվածությունն ապահովող օրենքով սահմանված պահանջների ու կարգի խստագույն պահպանմամբ՝ համապատասխան դատավարական ձևերով, և ուղղված է սահմանադրական, վարչական, քրեական, քաղաքացիական գործեր քննելուն և լուծելուն [6; 12]: Արդարադատությունը՝ որպես դատարանների բացառիկ լիազորություն, համարվում է դատական իշխանության իրականացման հիմնական եղանակը, միջոցը: Սակայն բացի այդ հիմնական լիազորությունից դատական իշխանությունն իրականացնում է նաև հետևյալ գործառնության լիազորությունները. իրավամեկնողական, իրավաստեղծ և սոցիալական կառավարման (իր իրավասության ժամկետներում): Հետևաբար դատական իշխանությունը կարելի է բնորոշել որպես պետության հատուկ մարմինների բացառիկ իրավազորություն, որը հանգում է հատուկ դատավարական ձևերով սոցիալ-իրավա-

կան վեճերի քննությանը և լուծմանը, ուղղված է իրավունքի սուբյեկտների իրավունքների պաշտպանությանը: Հետևաբար միայն դատական իսխանությունն է ունակ արդյունավետ երաշխավորել մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությունը, ապահովել պետական իշխանության լեգիտիմությունը և հասարակության բնականոն զարգացմանը:

Դատական իշխանության կարևոր առանձնահատկությունը՝ ինքնուրույնությունն է, որը վերոնշված հատկանիշների տրամաբանական շարունակությունն է:

Դատական իշխանության գործառնության լիազորություններից է մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը [18, էջեր 11-12]:

Քրեական գործի հարուցմանը, հանցագործության փաստի հաստատմանը, քրեական հետապնդման հարուցմանն ու իրականացմանն ուղղված դատավարական գործունեությունը կազմում է նախնական քննության հիմնական բովանդակությունը և ուղղությունը, որի իրականացման նպատակով դատախազը, քննիչը և հետաքննության մարմինն օժտված են բավական լայն լիազորություններով: Նշված լիազորությունների իրականացումը ենթադրում է քրեական դատավարության ոլորտ ներգրավված անձանց իրավունքների և ազատությունների որոշակի սահմանափակումներ, ուստի տրամաբանական է, որ քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված են իրավասու պետական մարմինների և պաշտոնատար անձանց անօրինական գործողություններից և որոշումներից անձի իրավունքների և ազատությունների պաշտպանության առանձնահատուկ դատավարական ընթացակարգեր, որոնց թվին է դասվում մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը [4, էջ 339]:

Ցանկացած իրավական համակարգում առկա է վերահսկողության որոշակի կառուցակարգ: Այս տեսանկյունից բացառություն չի կազմում նաև քրեական դատավարությունը, որում հանցագործությունները քննելիս օրինականությունը երաշխավորվում է հսկողության և վերահսկողության տարբեր միջոցների գույակցմամբ: Դատավարությունում գործերը քննելիս օրինականությունը երաշխավորվող գույակցված միջոցներ հանդես են գալիս դատախազական հսկողությունը, գերատեսչական և դատական վերահսկողությունները, որոնք, գործուն կերպով փոխարացնելով միմյանց, կոչված են հուսալիորեն պաշտպանելու անհատի սահմանադրական իրավունքներն ու ազատությունները, ապահովելու հանրային շահերը: Հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետության 1998 թվականի քրեական դատավարության օրենսգիրքն առաջին անգամ ամրագրեց քրեական

գործերով մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ինստիտուտը [5, էջ 226]:

Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ինստիտուտը գոյություն ունի ինչպես անգլո-սաքսոնական, այնպես էլ ռոմանագերմանական իրավական համակարգերում: Նման տեսակի վերահսկողության համար իրավական հիմք են միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքները, նորմերը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը, որոնք Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են:

Այժմ այս ինստիտուտի իրավական հիմքն են կազմում այնպիսի ունիվերսալ միջազգային փաստաթղթեր, ինչպիսիք են Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին 1966 թվականի դեկտեմբերի 16-ի միջազգային դաշնագիրը (ուժի մեջ է մտել 1976 թվականի մարտի 23-ին), տարածաշրջանային մակարդակում՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին 1950 թվականի նոյեմբերի 4-ին Հռոմում ստորագրված եվրոպական կոնվենցիան և այլն: Այս բոլոր փաստաթղթերն ունեն մեկ ընդհանրություն, մասնավորապես, վերջիններս պահանջում են, որ դատական վերահսկողությունը պետք է իրականացվի անկախ, ձեռնհաս և անաչառ դատարանի կողմից, որը կլինի օրենքի հիման վրա ստեղծված, կհետևի ժողովրդավարության սկզբունքներին, ողջամիտ ժամկետներում կքննի գործը և անձի իրավունքների ու ազատությունների խախտումն արդյունավետ ձևով կվերականգնի:

Ընդգծելով դատական իշխանության ինքնուրույնությունը և անկախությունը՝ ՀՀ Սահմանադրությունն ամրագրում է. «Հայաստանի Հանրապետությունում արդարադատությունն իրականացնում են միայն դատարանները՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան» (հոդված 162): Հարկ ենք համարում նշել, որ Հայաստանի Հանրապետությունում դատարանները կոչված են իրականացնելու արդարադատություն ոչ միայն գործն ըստ էության քննելիս, այլ նաև մինչդատական վարույթում անձի իրավունքների և ազատությունների ապահովման նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնելիս:

Դատարանին նման լիազորություններով օժտելը նպատակ է հետապնդում ապահովել արդարադատության մատչելիությունը և անձանց իրավունքների ու օրինական շահերի դատական պաշտպանությունը: Բացի դրանից, մինչդատական վարույթում իրականացվող դատական վերահսկողությունը կոչված է

ապահովելու նախնական քննության օրինակալությունը [2, էջեր 60-61]:

Քրեական գործի քննության ընթացքում դատարանի գործունեությունն իրենից ներկայացնում է միասնական համակարգ, որն ուղղված է խնդիրների իրականացմանը: Գտնվելով քրեական գործով վարույթն իրականացնող մարմինների «բուրգի գագաթում» դատարանն օժտված է լայն լիազորություններով ոչ միայն գործի քննության դատական, այլև մինչդատական վարույթում:

Քրեական վարույթի քննության այս փուլում դատարանի առաջնահերթ խնդիրն է ապահովել դատավարության մասնակցող անձանց իրավունքների իրացումը, պաշտպանել նրանց քրեական հետապնդման մարմինների անօրինական գործողություններից կամ վերահսկողություն իրականացնել նախնական քննության մարմինների գործունեության նկատմամբ [10, էջեր 421-425; 11; 13, էջեր 429-433; 14; 15; 20]: Այսինքն՝ մինչդատական վարույթում դատարանը վերահսկողություն է իրականացնում օրենքների կատարման և քրեական դատավարության տվյալ փուլին մասնակցող անձանց իրավունքների ու օրինական շահերի ապահովման նկատմամբ: Քրեական դատավարության այս փուլում դատարանի գործունեությունն առավելապես կապված է նախնական քննության մարմինների գործողությունների օրինականության և որոշումների հիմնավորվածության նկատմամբ իրականացվող վերահսկողության հետ:

Դատական վերահսկողությունը՝ որպես իրավական գործունեության ինքնուրույն տեսակ, անհրաժեշտ է դիտարկել սոցիալական վերահսկողության տարատեսակ հանդիսացող դատավարական վերահսկողության յույսի ներքո: «Վերահսկողություն» հասկացությունը սահմանվում է որպես «ստուգում» կամ «հաշվետվության պահանջում» [19, էջ 51], նմանապես սահմանման համաձայն՝ վերահսկողությունը (ֆրանս. controle) ցուցակ է, որը վարվում է երկու օրինակով:

Ընդհանրապես, վերահսկողությունն ստուգումն է, ստուգման կամ հսկողության նպատակով իրականացվող մշտական դիտարկումը: Ստուգումը, ըստ լեզվաբանի, ենթադրում է որևէ բանի ճշմարտացիության մեջ համոզվելը, ստուգման կամ վերահսկողության նպատակով ուսումնասիրելը: Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ վերահսկողությունը կարող ենք սահմանել որպես գործառնություն, որը կապված է ստուգման, դիտարկման և համապատասխանեցման հետ:

Հասարակական, այդ թվում՝ իրավական նորմերով կարգավորվող հարաբերությունների վերահսկողության գործառնություն առկա է այն դեպքում, երբ իրավասու մարմինները և պաշտո-

նատար անձինք կիրառելով կազմակերպարարական միջոցներ և ձևեր՝ պարզում են.

- համապատասխանում է, արդյոք, մարմինների և անձանց գործունեությունն օրենքին և նրանց առջև դրված խնդիրներին,

- կառավարվող օբյեկտների նկատմամբ կառավարման սուբյեկտների ներգործության ինչ արդյունքներ են առկա,

- նպատակներից և դրանց հասնելու միջոցներից ինչ շեղումներ են առկա, ինչ միջոցներ են ձեռնարկվել վերոնշյալ շեղումների կանխման և դրանց համար մեղավոր անձանց պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ:

Կառավարման ընդհանուր տեսությունը վերահսկողական գործառնությունների իրականացումը դիտում է որպես կառավարման գործընթացի գլխավոր փուլերից մեկը, որի ընթացքում պարզվում են իրականացված միջոցառումների հետևանքները և ստուգվում է սահմանված ձևաչափերին դրանց համապատասխանությունը, ինչի արդյունքում հնարավոր է ուրվագծել, թե վերահսկվող գործունեության կայունացմանը, շտկմանն ու, ի վերջո, արդյունավետության բարձրացմանն ուղղված ի՞նչ միջոցառումներ է անհրաժեշտ իրականացնել:

Եզրակացություն

Վերոհիշյալ վերլուծությունից կարելի է եզրակացնել, որ դատական իշխանությունը պետական հատուկ գործունեության տեսակ է, որի առաքելությունը ոչ միայն վեճերի լուծումն է, այլև իրավամեկնողական, իրավաստեղծ, վերահսկողական գործառնությամբ լիազորությունների իրականացումն է՝ սահմանադրությամբ և օրենքով սահմանված ընթակարգերով:

Օգտագործված գրականության ցանկ

1. «Դատական և իրավական բարեփոխումների ծրագրերի ազդեցությունը Հայաստանի Հանրապետությունում դատական իշխանության անկախության հաստատման վրա»:
2. «Դատավորի ձեռնարկ: Գիտագործնական վերլուծություն», հեղինակային խումբ՝ **Ա.Մկրտումյան, Գ. Ավետիսյան** և այլք., ընդհանուր խմբագիր՝ **Վ.Ենգիբարյան**: – Եր.: «Աստղիկ», 2010
3. «ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագրերը հաստատելու մասին» Կառավարության 10 հոկտեմբերի 2019 թվականի № 1441-Լ որոշումը // ՀՀՊՏ№74 (1527)¹ 25 հոկտեմբերի 2019: <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=110851>

4. «Հայաստանի Հանրապետության վճարելի դատարանի որոշումների գիտագործնական մեկնաբանություններ»։ ընդհանուր գիտական խմբագրությամբ **Ա. Մկրտումյանի, Գ. Ավետիսյանի, Վ. Ենգիբարյանի, Ռ. Մելիքյանի**: – Եր.: «Աստղիկ», 2011:
5. «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն: Հատուկ մաս (2-րդ հրատարակություն, լրացումներով և փոփոխություններով)»: Հեղին, խումբ՝ **Ս. Գիլբանդյան, Ա. Հարությունյան, Գ. Ղազինյան** և այլք: – Եր.: Երևանի համալս. հրատ., 2010:
6. Հայաստանի Հանրապետության արդարադատության համակարգը: Դասագիրք բուհերի համար: – Երևան, ԵՊՀ հրատ., 2019: – 384 էջ:
7. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն: Հատուկ մաս (2-րդ հրատ.): – Երևան, 2010:
8. **Մկրտումյան Ա., Ավետիսյան Գ. և այլք** Դատավորի ձեռնարկ: Գիտագործնական վերլուծություն: – Երևան, 2010:
9. **Սաֆարյան Գ., Մալխասյան Լ.** Դատական իշխանությունը որպես սոցիալ-իրավական ինստիտուտ. Դատմատեսական հետազոտություն: – Երևան, Եվրոպրինտ: 2020: – 400 էջ:
10. **Азаров В. А., Таричко И. Ю.** Функция судебного контроля в истории, теории и практике судебного контроля в уголовном процессе. – Казань 2004.
11. **Володина Л. М.** Исторические проблемы с занск. гос. ун-т, 2004.
12. **Воскобитова Л. А.** Теоретические основы судебной власти. – М., 2017.
13. **Гуськова А. П.** Право на судебную защиту: история и современность.
14. **Ковтун Н. Н.** Судебный контроль в уголовном судопроизводстве России: Моногр. – Нижний Новгород: Нижегородск. правовая акад., 2002.
15. **Лазарева В. А.** Судебная власть и ее реализация в уголовном процессе. – Самара: Самарск. ун-т, 1999.
16. **Петрухин И. Л.** От инквизиции к самостоятельности. – М., 2003.
17. Самостоятельность и независимость судебной власти РФ. – М., 2006,
18. Судебная власть. – М., 2001.
19. **Тарасов А. М.** Технология государственного (президентского) контроля: элементы эффективности // Право и политика. 2001. № 12.
20. Теория и практика судебной защиты в уголовном процессе. – Самара: Самарск. ун-т, 2000.

Տճանա/Հանձնվել է՝ 21.03.2025
Քեցենզրոճանա/Գրախոսվել է՝ 28.03.2025
Քրինյա/Ընդունվել է՝ 04.04.2025